ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2018 թվականի N 19/4

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 10/4
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 13/8 որոշման 1-ին և 2-րդ կետերով, 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17/1 որոշման 2-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության ծրագրում լրացում կատարելու մասին 2018թ. դեկտեմբերի 12-ի թիվ 19/1 որոշմամբ՝Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Վերսկսել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում կասեցված ստուգումը:

2. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 10/4 որոշման հավելվածի 5-րդ և 5.1-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**5. Հաշվեքննության կատարման ժամկետը՝** 2018թ. հոկտեմբերի 22-ից մինչև 2019թ. մարտի 29-ը ներառյալ:

5.1. Զննման և դիտարկման ընթացակարգերի իրականացման ժամկետը՝ 2019թ. հունվարի 21-ից մինչև 2019թ. փետրվարի 22-ը ներառյալ:»:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ